

ԱՄՓԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-485-485⁵-24.02.2020-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հ/Հ	ԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	2	3	4	5	6

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

1.	ԱԺ պատգամավոր Եղիշե Սողոմոն նյան	<p>«Նախագծի 4-րդ հոդված. «...Հոդված 684.5. Լիզինգի պայմանագրի լուծումը</p> <p>1. Լիզինգատուի պահանջով լիզինգի պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե՝</p> <p>1) լիզինգառուի կողմից լիզինգի առարկայի օգտագործումը չի համապատասխանում լիզինգի պայմանագրի պայմաններին կամ լիզինգի առարկայի նշանակությանը,</p>	Նախագծի 4-րդ հոդվածից հանել հետևյալ բառերը «3. լիզինգառուն լիզինգի պայմանագրով սահմանված ժամկետում ավելի քան երկու անգամ անընդմեջ չի վճարել հերթական լիզինգային վճարը:», քանի որ նույն հոդվածի 3-րդ կետով սահմանված է «Լիզինգի պայմանագրով կարող են սահմանվել լիզինգատուի կամ լիզինգառուի պահանջով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու այլ հիմքեր:», որով կարող ենք սահմանել ավելի կարճ ժամկետ, քան սահմանված է երրորդ կետով:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող Քաղաքացիական օրենսգրքի 684.5-րդ հոդվածի 1-ին մասի 3) կետում «լիզինգային վճարը» բառերից հետո լրացվել է «, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:» բառերը:	Ընդունվել է:
----	----------------------------------	---	---	---	--------------

	<p>2) եթե լիզինգառուն սահմանափակում է լիզինգատուի հսկողության իրավունքը լիզինգառարկայի նկատմամբ,</p> <p>3) լիզինգառուն լիզինգի պայմանագրով սահմանված ժամկետում ավելի քան երկու անգամ անընդմեջ չի վճարել հերթական լիզինգային վճարը:»...»</p>			
--	---	--	--	--

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին»

2.	ԱԺ պատգամավոր Եղիշե Սողոմոն նյան	Նախագծում ավելացնել նոր 12.1 հոդված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147 հոդվածի 16-րդ կետի վերաբերյալ	Նախագծում ավելացնել նոր 12.1 հոդված հետևյալ բովանդակությամբ. «ՀՀ հարկային օրենսգրքի Հոդված 147-ի Նվազեցվող եկամուտները (նվազեցումները) 16-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտներ, ինչպես նաև լիզինգի պայմանագրի առարկա հանդիսացող գույքի օտարումից ստացվող եկամուտները, եթե կնքված	Զի ընդունվել: Նախագծով առաջարկվում է գործող հարկային օրենսդրության մեջ կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հնարավորություն կընձեռեն, որպեսզի լիզինգային ընկերությունների կողմից ֆիզիկական անձանցից ձեռքբերվող, այնուհետև լիզինգային պայմանագրով տրվող լիզինգի առարկայի մասով՝ վաճառող ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից համարվեն նվազեցվող եկամուտներ: <i>Մասնավորապես,</i>	Ընդունվել է:
----	----------------------------------	--	---	---	--------------

պայմանագրի պայմանները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 667-րդ հոդված 3-րդ մասի սահմանված պահանջներին:»

առաջարկվում է հարկային օրենսդրությամբ սահմանել, որ ֆիզիկական անձի կողմից գույքը լիզինգային ընկերությանը վաճառելու դեպքում վերջինիս մոտ, որպես հարկային գործակալ, վաճառքի գնի 10 տոկոսի չափով եկամտային հարկ հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու պարտավորություն չի առաջանում (ինչպես նախատեսված է ընդհանուր կանոնի համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից հարկային գործակալին այլ տեսակի գույք վաճառելու գործարքների համար):

Ընդհանուր առմամբ կարևորելով միջազգային պրակտիկայում լայնորեն տարածված՝ լիզինգային պայմանագրերի հիման կատարվող գործարքների համար հետագա նպաստավոր պայմաններ ստեղծելուն ուղղված քայլերը, միևնույն ժամանակ գտնում ենք, որ անհրաժեշտ է այդ ուղղությամբ հարկային օրենսդրության հնարավոր փոփոխությունները իրականացնել այնպես,

որպեսզի մի կողմից
չձևավորվեն հարկումից
խուսափելու
հնարավորություններ և
հետևաբար՝
չարաշահումների ռիսկեր,
մյուս կողմից, որպեսզի
կատարվող
փոփոխությունները
նախադեպ չլինեն
այնպիսի ոլորտներում
համանման
փոփոխություններ
կատարելու պահանջ
ծնավորելու առումով,
որոնց մասով համանման
փոփոխությունների
կատարումը, հնարավոր է,
որ նպատակահարմար
չհամարվի:

Միաժամանակ, խնդրո
առարկա գործարքների
մասով միայն լիզինգային
ընկերություններին
հարկային
արտոնությունների
տրամադրումը համարում
ենք ոչ
նպատակահարմար,
հաշվի առնելով այն
հանգամանքը, որ որևէ
տնտեսավարող սուբյեկտի
հասցեական հարկային
արտոնությունների տրա-
մադրումը չի բխում
հարկման արդարության
ու հավասարության սկզ-
բունքներից, իսկ հարկա-
յին քաղաքականության
շրջանակներում խտրա-

				կան մոտեցումների ցուցաբերումը տնտեսու- թյան մեջ առողջ մրցակցությունը խաթա- րելու ռիսկեր է առաջացնում:	
--	--	--	--	--	--